«Սրբության ճգնաժամ». «Էփշթեյնի գործի» էթիկական և աշխարհաքաղաքական ենթատեքստը 2026 թվականին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 18.02.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ն արծարծում է Ջեֆրի Էփշթեյնի գործի հետ կապված ԱՄՆ արդարադատության նախարարության արխիվային նյութերի աննախադեպ լայնածավալ հրապարակումը (հունվար, 2026): Քննարկվում են Կոնգրեսի օրենսդրական նախաձեռնությունները, որոնք հանգեցրին փվյալների բացահայտմանը և այդ գործընթացին ուղեկցող ներքաղաքական պայքարը: Վերլուծվում են «արտաքին հետքի» (մասնավորապես՝ իսրայելական հատուկ ծառայությունների դերի) վարկածները և գնահատվում է սկանդալի ազդեցությունը ամերիկյան պետականության գաղափարական հիմքի և աշխարհում ԱՄՆ մեսիական դերի վրա:

Բանալի բառեր. *Ջեֆրի Էփշթեյն, ԱՄՆ արդարադատության նախարարություն, Դոնալդ Թրամփ, Էփշթեյնի ֆայլերի թափանցիկության մասին օրենք, կոմպրոմատ, Մոսադ, Մերձավոր Արևելք, ԱՄՆ քաղաքական ճգնաժամ, քրիստոնեական սիոնիզմ, «Ամերիկան նախ և առաջ»:*

ԱՄՆ-ում 2026 թ. սկզբի իրադարձությունները նշանավորեցին ամերիկյան վերնախավերի համակարգային ճգնաժամի նոր փուլ: Մանկապիղծ ֆինանսիստ Ջեֆրի Էփշթեյնի գործով գաղտնի փաստաթղթերի, տեսաֆիլմերի և լուսանկարչական նյութերի զանգվածային բացահայտումը դադարել է տեղայնական բնույթի քրեական հետաքննություն լինել՝ վերածվելով գլոբալ քաղաքական վերակառուցման գործիքի: Տվյալների հրապարակումը, որը հնարավոր է դարձել դեմոկրատների և հանրապետականների միջև հազվադեպ կոնսենսուսի շնորհիվ, բարձրացրել է հարցեր, որոնք դուրս են եկել իրավաբանության շրջանակներից՝ ԱՄՆ տարածքում օտարերկրյա հետախուզության աշխատանքի մեթոդներից մինչև իշխանության հաստատությունների նկատմամբ քաղաքացիների հիմնարար վստահությունը:

ԱՄՆ արդարադատության նախարարությունը, այսպես կոչված, «*Ջեֆրի Էփշթեյնի գործից*» 30.01.2026 թ. հրապարակել է լրացուցիչ 3 միլիոն էջ, ներառյալ 2.000 տեսանյութ և 180.000 լուսանկար: Ավելի վաղ՝ 18.11.2025 թ., ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը 427 «*կողմ*» և մեկ «*դեմ*» ձայներով ընդունել էր «Էփշթեյնի ֆայլերի թափանցիկության մասին» օրենքը, որն այնուհետև միաձայն հաստատվել էր Սենատի կողմից: Հաջորդ օրն օրենքն ստորագրեց նախագահ Դոնալդ Թրամփը: Օրենքը ֆայլերի հրապարակման վերջնաժամկետ է սահմանել 19.12.2025 թ.: Սակայն մինչ այդ ԱՄՆ արդարադատության նախարարությունը հրապարակել էր իր ունեցած «*Էփշթեյնի բոլոր ֆայլերի*» միայն մի մասը, ինչն առաջացրել էր դեմոկրատական և հանրապետական կուսակցությունների դժգոհությունը: Կոնգրեսի երկու պալատների ճնշման ներքո ԱՄՆ արդարադատության նախարարությունն ստիպված էր 30.01.2026 թ. հրապարակել մնացած նյութերը, սակայն դրանք հասանելի մնացին ընդամենը 1,5 ժամ:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 16.02.2026 թ.:

Ամերիկյան ԶԼՄ-ների տեղեկություններով՝ արդարադատության նախարարությունը ֆայլերը ջնջել է իրենց անձնական տվյալների հրապարակումն իրավունքների խախտում համարող «*հանցագործությունների մի քանի զոհի*» բողոքի պատճառով:

ԱՄՆ արդարադատության նախարարության լրացուցիչ հրապարակված ֆայլերը հաստատել են այն լուրերը, որ Ջ. Էփշթեյնի ստեղծած ընդհատակյա ցանցն զգալիորեն ավելի ծավալուն ու հանցավոր էր, քան վկայում էին մինչ 19.12.2025 թ. գաղտնազերծված փաստաթղթերը: Աղմկահարույց ֆայլերի հրապարակման հետևանքների համատեքստում այս պահին առանցքային է դարձել ԱՄՆ գործող նախագահի քաղաքական ճակատագրի և, որ ավելի կարևոր է, նրա վարած քաղաքական գծի վրա դրանց պրոյեկտավորման հարցը:

Հայտնի է, որ Դ. Թրամփն ինքն է նախաձեռնել նյութերի հրապարակումը, երբ 2024 թ. նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրազանգվածին խոստացել է բացահայտել «*Էփշթեյնի գործի*» բոլոր մանրամասները, որպեսզի ամերիկյան հասարակությունը ծանոթանա «*այն հրեշավոր հանցագործությունների իրական ծավալներին, որոնցում թաղված են դեմոկրատները*»: Երկրորդ նախագահական ժամկետի համար ընտրվելուց հետո Դ. Թրամփն ստորագրեց երկու պալատների կողմից ընդունված «Էփշթեյնի ֆայլերի թափանցիկության մասին» օրենքը որն այդ ժամանակ ամերիկյան հասարակությանը վստահություն ներշնչեց, որ նախագահն իսկապես մտադիր է պատասխանատվության ենթարկել ամերիկյան վերնախավի բարոյալքված շրջանակներին, իսկ ինքը միշտ հեռու էր նման երևույթներից: Այս կարծիքն ամրապնդվել է ռեփեր Փի Դիդիի (Շոն Քոմբս) նկատմամբ 2025 թ. մայիսին սկսված դատավարությունից հետո, որը նույնպես փաստացի կազմակերպել էր ամերիկյան շոու-բիզնեսի աստղերին թրաֆիքինգի և սեքս-ծառայությունների մատուցման ցանցը: Այս կապակցությամբ Դ. Թրամփը քննարկվող փուլում ձեռք բերեց ավանդական արժեքների ջատագովի և ամերիկյան վերնախավերի «*սանիտարի*» վարկանիշ, որը ներդաշնակորեն տեղավորվում էր ԱՄՆ-ն արմատապես «*վերաբեռնելու*» և երկիրը ավանդական արժեքների ու քրիստոնեական բարոյականության հուն վերադարձնելու նրա հայտարարած քաղաքականության մեջ:

Այնուամենայնիվ, «*Էփշթեյնի գործի*» վերաբերյալ մինչ 19.12.2025 թ. հրապարակված ֆայլերի որոշակի «*թերատությունը*» և այն փաստը, որ նյութերը նախապես «*մաքրվել են*», երկու կուսակցություններում էլ քննադատության և հասարակական միջավայրում վրդովմունքի պատճառ են դարձել, որոնք սրվել են հրեշավոր հանցագործություններին Դ. Թրամփի մասնակցության չբացահայտված փաստերի առկայության մասին լրատվամիջոցներում շրջանառվող լուրերով, հանցագործություններ, որոնք իրագործվել են Ջ. Էփշթեյնի փակ «*ակումբում*»: Եթե դեմոկրատները պահանջում էին լիակատար թափանցիկություն՝ ելնելով այն հանգամանքից, որ հրապարակված նյութերը վարկաբեկում են հիմնականում իրենց կուսակցության առավել անցանկալի անդամներին և եվրոպական միապետությունների որոշ ներկայացուցիչների, ապա հանրապետականների նման

խնդրանքը պայմանավորված էր նրանց ներխմբակցային պայքարով, որը չթուլացավ նույնիսկ անցած ընտրություններում կուսակցության հաղթանակից հետո: Դ. Թրամփի ընդդիմախոս կուսակիցները «*Էփշթեյնի գործով*» աղմկահարույց իրավիճակը հարմար առիթ են համարել հանրապետական նախագահին հարվածելու համար, որը հեռացել է իր կուսակցության հետ հաստատութենական փոխգործակցության ավանդույթներից և չի պահպանում առանցքային որոշումների ընդունման կոլեգիալ ձևաչափերը:

Այսպես թե այնպես, ԱՄՆ արդարադատության նախարարությունն ուժեղ ճնշման տակ ստիպված էր հրապարակել ֆայլերը, չնայած այն հանգամանքին, որ դրանց հրապարակման համար օրենքով սահմանված ժամկետը լրացել է: Դ. Թրամփի համար սա լուրջ փորձություն էր, քանի որ նրա նախկին հավաստիացումներն առ այն, թե Ջ. Էփշթեյնի հետ իրեն կապում էին զուտ գործարար շահերը, կասկածի տակ դրվեցին նոր փաստերի հրապարակումից հետո: Ըստ ամերիկյան աղբյուրների, հրապարակված ֆայլերը պարունակում են բազմաթիվ ապացույցներ, որ Դ. Թրամփը մասնակցել է Ջ. Էփշթեյնի կազմակերպած «*երեկույթներին*»:

Եթե աղմկահարույց ֆայլերն ԱՄՆ հանրային լայն շրջանակներին ավելի շատ հետաքրքրում են երկրի վերնախավերի բարոյալքման համատեքստում, ապա փորձագիտական հանրությունը փորձում է մանրամասն հասկանալ այս բացահայտիչ նախաձեռնության քաղաքական դրդապատճառները և այն, թե կոնկրետ ով է կանգնած այդ ամենի հետևում: Իրավիճակի վերլուծությունը բարդանում է նրանով, որ հրապարակված ֆայլերը հավասարապես ստվեր են գցում ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների վրա: Այս հանգամանքը հանգեցնում է այն մտքին, որ հազիվ թե խոսքը վերաբերում է դեմոկրատների և հանրապետականների միջև միջկուսակցական պայքարի գործիքակազմին, որը սրվել է նախագահական պաշտոնից Բ. Օբամայի հեռանալուց հետո:

Եթե ելնենք այն հանգամանքից, որ սկանդալը ներամերիկյան քաղաքական գործընթացների հետևանք է, ապա դա կարող է նշանակել, որ ԱՄՆ-ի քաղաքական կյանքում նկատվում են ինչպես դեմոկրատների, այնպես էլ հանրապետականների ճամբարում կուսակցական անվանացուցակի դեմ ստորին օղակների և խաղից դուրս մղված կուսակցական շրջանակների «*ապստամբության*» ակնհայտ նշաններ: Այս առումով հատուկ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ «Էփշթեյնի ֆայլերի թափանցիկության մասին» օրենքի նախաձեռնությունը բխել է երկու կուսակցությունների ներկայացուցիչներից՝ ինչպես Ներկայացուցիչների պալատում, այնպես էլ Սենատում, և փաստաթուղթն ընդունվել է գրեթե միաձայն:

Հազիվ թե երկու կուսակցությունների սենատորներն ու կոնգրեսականները, մշակելով այս օրենքը, պատկերացում չունեին, թե ինչ ծավալի գործիչների է այն անդրադառնալու և ինչպիսին են լինելու բացահայտումների քաղաքական հետևանքները: ԱՄՆ-ում տակավին 2019 թվականից են շրջանառվում տեղեկությունները Ջ. Էփշթեյնի հանցավոր ցանցում երկու կուսակցությունների առավել վատահամբավ քաղաքական դեմքերի, ինչպես նաև

ֆինանսների և բիզնեսի ոլորտում նրանց մերձավոր գործիչների ներգրավվածության մասին: Հետևաբար, չի կարելի պնդել, որ ամերիկացի խորհրդարանականները պատկերացում չունեին, թե բացահայտող ֆայլերի հրապարակմամբ որ «*Պանդորայի արկղն*» են պատրաստվում բացել:

Այնուամենայնիվ, շատ դիտորդներ կարծում են, որ բացահայտումների գործընթացը մեկնարկել է ոչ առանց արտաքին ուժերի մասնակցության: Այս կապակցությամբ գլխավորապես հիշատակվում են Իսրայելը, նրա աջ արմատական կառավարությունը և նրա հետ սերտորեն համագործակցող Ամերիկայի սիոնիստական կառույցները, որոնք խորապես ինտեգրված են ԱՄՆ քաղաքական համակարգին: Ըստ այդ վարկածի կողմնակիցների՝ էփշթեյնի ստեղծած հանցավոր ցանցն ինքնին իսրայելական «Մոսադ» հետախուզության երկարամյա աշխատանքի արդյունքն էր, որի գործակալն էր, ենթադրաբար, հանդիսանում տխրահռչակ ֆինանսիստը: «Մոսադն» այդպիսով, իբր, քաղաքական վերնախավերի և ամերիկյան ընտրանու բարձրագույն շրջանակների ներկայացուցիչներին ներքաշել է «*Էփշթեյնի գաղտնի ակումբ*» և հավաքել վարկաբեկող նյութերի ընդարձակ քարտարան, նյութեր, որոնք Իսրայելի կառավարությունն ու նրա ամերիկացի կողմնակիցներն օգտագործում են Վաշինգտոնի ներքին և արտաքին քաղաքական օրակարգի վրա ազդելու համար:

Որպես հնարավոր պատճառներ, որոնք «*ամերիկացի սիոնիստներին*» դրդել են հենց հիմա դիմել ԱՄՆ-ի քաղաքական ընտրանուն վարկաբեկող նյութերի լցոնմանը, նշվում են Վաշինգտոնի անվճռականությունն իրանական խնդրի ուժային լուծման հարցում, ինչպես նաև Թրամփի մերձավորարևելյան քաղաքականությունն ընդհանուր առմամբ, որը մի շարք առանցքային դիրքորոշումներով հակասում է հրեական պետության շահերին: Այս առումով ուշադրություն է հրավիրում այն փաստը, որ «*Էփշթեյնի ֆայլերի*» հրապարակման հետ կապված աղմուկը ժամանակագրական առումով համընկնում է Իրանի շուրջ լարվածության ներկայիս փուլի հետ, որը, սակայն, չի վերաճել ռազմական հակամարտության փուլի՝ Դ. Թրամփի այն մտավախությունների պատճառով, թե պատերազմը կարող է աղետ դառնալ հենց ԱՄՆ-ի համար:

«*Իսրայելա-սիոնիստական հետքի*» վարկածի կողմնակից փորձագետները հակված են կարծելու, որ «*Էփշտեյնի ֆայլերը*» գործի են դրվել՝ հաշվի առնելով միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի վարքագծի հեռանկարների ավելի լայն համատեքստը, հեռանկարներ, որոնք արտացոլված են «*ԱՄՆ-ի ազգային անվտանգության նոր դոկտրինում*»: Ենթադրվում է, որ այդ փաստաթղթում «*սիոնիստները*» տեսնում են գլոբալ գերիշխանության գաղափարից ԱՄՆ-ի պատմական նահանջի և, առաջին հերթին, մերձավորարևելյան շահերի ավանդական առաջնահերթությունից Վաշինգտոնի հրաժարվելու վտանգը: Այս առումով «*Ամերիկան նախ և առաջ*» կարգախոսը կարող է գլոբալ քաղաքականության գաղափարական առանցք դառնալ ոչ միայն բուն թրամփականների, այլև հետագա՝ ներառյալ դեմոկրատների կողմից

ձևավորված վարչակազմերի համար, որոնց համար «*Նոր դոկտրինով*» նշված ամերիկյան գերիշխանության հորիզոնը կսահմանափակվի սոսկ Արևմտյան կիսագնդով:

Հիշյալ փորձագետների կարծիքով՝ խոսքը ոչ թե դավադրության, այլ սիոնիստական աջ արմատականների միանգամայն իրական մտավախությունների մասին է, որոնք ամերիկյան վերնախավերի վարքագծում միաբևեռ աշխարհի համար պայքարից «*հոգնածության*» նշաններ են նկատել: Ուստի չպետք է զարմանք հարուցի այն փաստը, որ «*Էփշթեյնի գործով*» ԱՄՆ քաղաքական ընտրանուն հասցված հարվածն առաջին հերթին բաժին է հասել «*քրիստոնեական սիոնիզմի*» գաղափարախոսության կրողներին՝ ի դեմս նախագահ Դ. Թրամփի և նրա շրջապատի, որոնք կարող են մեղադրվել աշխարհում ամերիկյան գերիշխանության գաղափարի սրբազան բաղադրիչն ուրանալու մեջ:

Անկախ այն կոնկրետ գործոններից, որոնք լայն հասարակական արձագանք են հարուցել «*Էփշթեյնի գործի*» շուրջ, տվյալ նախադեպը կրիտիկական նշանակություն ունի ամերիկյան պետական հաստատությունների կայունության գնահատման համար: Այս գործի նշանակությունը դուրս է գալիս ԱՄՆ արտաքին քաղաքական վարկանիշի շրջանակներից՝ մատնանշելով քրիստոնեական էթիկայի սկզբունքներով պատմականորեն օրինականացված համակարգի հիմնարար քայքայումը:

Ամերիկյան պետականությունն ի սկզբանե նախագծվել է որպես սրբացված սոցիալական կառուցվածք: Համակարգի հիմքում ընկած էր «*Նոր Ավետյաց երկիր*» հայեցակարգը, որը կոչված էր իրականացնելու ազատության և արդարության իդեալները բողոքական էթիկայի շրջանակներում: «*God Bless America*» («*Աստված օրհնի Ամերիկան*») կարգախոսը պատմականորեն ոչ թե որպես ձևականական կոչ է մեկնաբանվել, այլ որպես Աստծո նախախնամության ներքո պետական շինարարության համագործակցության Սահմանադրություն: Իր հերթին՝ ամերիկյան հասարակությունը դիրքավորվել է որպես «*քաղաք բլրի վրա*» հայեցակարգի նյութականացման փորձ՝ իդեալական համայնք ոչ իդեալական աշխարհում: Հին աշխարհի դասային տիտղոսներից ամերիկյան վերնախավի հրաժարումը ենթադրում էր նոր մերիտոկրատիայի՝ արժանավորների իշխանության ձևավորում, որտեղ «*իշխանության մարդու*» կարգավիճակը պայմանավորված էր բարոյական պատվիրաններին խիստ հավատարմությամբ:

Ներկայիս պայմաններում նկատվում է այդ «*էկալոնի*» սրընթաց վատթարացում, որը վերածվում է քաղաքական միֆի ինչպես համաշխարհային հանրության, այնպես էլ ամերիկյան հասարակության համար: Առանցքային դեմքերի վարկաբեկումը, որոնք ավանդաբար դիտարկվում էին որպես համակարգի բարոյա-էթիկական հիմնակմախքի անսասան երաշխավորներ, հարցականի տակ է դնում ողջ պետական մեքենայի գործունակությունը: Էթիկական առումով խնդիրը, մեղմ ասած, ամերիկյան ընտրանու ներկայացուցիչների՝ աշխարհի լավագույն համալսարանների շրջանավարտների, «*անթույլատրելի*» վարքագծի մեջ է, մինչդեռ հաստատութենական առումով խոսքն

ամբողջ համակարգի հետագա գործունակության մասին է: Այլ կերպ ասած, խոսքը ամերիկյան պետության ինքնամաքրման և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի պահպանման ունակության մասին է:

Մասնակից անձանց նկատմամբ համարժեք իրավակիրառման և մեղադրական ակտերի բացակայությունը կարող է վերջնական դատական որոշում դառնալ ներկայիս «*զսպումների և հաշվեկշիռների համակարգի*» համար: Դա չեղարկման է տանում երկու հիմնային կոնսենսուսներ՝ սոցիալ-իրավական, ինչը նշանակում է քաղաքացու և իշխանության միջև սոցիալական պայմանագրի խզում, և աստվածաբանական, ինչը հղի է «*Սուրբ նախախնամությամբ*» նախանշված իրավահաջորդության կորստյամբ, որը պատմականորեն հիմք է ծառայել ԱՄՆ սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական վերելքի համար:

Ընթացիկ ճգնաժամը վկայում է հռչակված «*էթիկական մեսիանության*» և Միացյալ Նահանգների քաղաքական վերնախավերի փաստացի վիճակի միջև խորը հակասության մասին: Ներկայիս վարչակազմի կողմից վճռական իրավական միջոցների բացակայության պայմաններում այս բացը վտանգում է ամերիկյան մոդելը գլոբալ ուղենիշից վերածել պատմական մի մասունքի, որը կորցրել է իր բարոյական և հաստատութենական օրինականությունը: Դա արդեն հիմա բացահայտ ակնարկում են նրա աշխարհաքաղաքական ընդդիմախոսները և ոչ միայն նրանք: